ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԶԱՐԳԱՑՆՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ:

Վերապատրաստվող՝ Մայրանուշ Ղազարյան Վարդանի
Արմավիր մարզի՝ Մեծամոր համայնքի Բամբակաշատ ՀՈԱԿ մանկապարտեզ

Վերապատրաստող՝ մ.գ.թ.Գայանե Մարտիրոսյան

2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1.Նախադպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության էության և դաստիարակության էությունը,նպատակն ու խնդիրները:

2.Նախադպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակության ընտրության սկզբունքները և առանձնահատկությունները :

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

- Պարապմունքներ երեխաների հետ:
- Երեխաների առողջությունը և հիգիենան:
- Երեխաների զարգացումը:
- Եզրակացություն:
- Օգտագործված գրականություն:

Նախադպրոցականների էկոլոգիական կրթության,դաստիարակության համակարգի էությունը,նպատակն ու խնդիրները; Անձի էկոլոգիական կրթությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է, որը բխում է ,Մարդ-հասարակություն-բնություն փոխազդեցության պահանջներից: Էկոլոգիական կրթություն ասելով հասկանում ենք էկոլոգիական գիտելիքների,կարողությունների և հմտությունների այն համակարգը,որի յուրացումը նպաստում է էկոլոգիական դաստիարակության գործընթացի իրականացմանը:էկոլոգիական կրթությունը էկոլոգիական գիտելիքների .կարողությունների և հմտությունների համակարգ է,որը միտված է երեխաների մեջ շրջապատող բնական աշխարհի,երևույթների,նրա օրենքների և օրինաչափությունների մասին գիտելիքների և պատկերացումների,բնաճանաչողական ընդունակությունների,իմացական հետաքրքրությունների,էկոլոգիական մշակույթի ձևավորումը: Նախադպրոցական հաստատություններում երեխաների իմացական հետաքրքրությունների ակտիվացմանը զուգընթաց լուծվում է նրանց բնաճանաչողական ընդունակությունների և բնապահպանական կարողությունների զարգացման հարցը: Հոգեբանական գրականության մեջ ընդունակությունները ընդունված է անվանել անձնավորության այնպիսի հատկությունները,որոնք այս կամ այն գործունեության լիարժեք յուրացման համար նախադրյալներ են ստեղծում,ինչպես նշում է անվանի հոգեբան Լ.Ս.Ռուբենշտեյնը,ընդունակություններն ի հայտ են գալիս և ձևավորվում համապասխան գործունեության մեջ; Երեխայի բնաճանաչողական ընդունակություններին հատուկ են այնպիսի որակներ,ինչպիսիք են բնության օբյեկտները,երևույթները ընկալելու,ճանաչելու մտավոր արձագանքների արագությունը,դրանց օբյեկտիվ գնահատական տալու,շնչավորելու,հարաբերակցվելու ընդունակությունը; Այդ ունակությունները զարգացնելու նպատակով պետք է օգտագործել տարբեր միջոցներ,օրինակ՝դիդակտիկ խաղեր,հանելուկներ,հեքիաթներ,պարզագույն մաթեմատիկան խնդիրներ,էքսկուրսիաներ և այլն:Ժամանակակից էկոլոգիական կրթության և դաստիարակության հայեցակարգը հիմնավորելիս պետք է հաշվի առնել էկոլոգիական կայուն զարգացման հայեցակարգային գաղափարները:Ներկայումս գոյություն ունի հակասություն նախադպրոցականների էկոլոգիական կրթության նպատակների,խնդիրների և նրա բովանդակության տարբերակման միջև:Դա պայմանավորված է նրանո,որ էկոլոգիական դաստիարակության առաջադիր նպատակներն ու խնդիրները հիմնվում են ժամանակի նոր էկոլոգիական պահանջների վրա,իսկ նախադպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակությունը դեռևս հիմնվում է մարդաբանական տեսության վրա:Վերջինս առավել ցայտուն է դրսևորվել էկոլոգիական կրթության համակարգի սկզբնական աստիճաններում ,և որքան բարձր է այդ աստիճանը ,այնքան ավելիթույլ է արտահայտված հակասությունը:Այդ օրինաչափությունն առաջին հերթին պայմանավորված է հասարակության,մասնավորապես՝մարդու արժեքային կողմնորոշումների փոփոխման ,շրջապատող իրականության նկատմամբ սպառողական մոտեցման վերացման անհրաժեշտությամբ;Նախադպրոցական մանկավարժության մեջ մի խումբ գիտնականներ հաճախ օգտագործում են ՛՛՛՛ էկոլոգիական կրթության ,էկոլոգիական դաստիարակության

հասկացությունները՝կիրառելով դրանք որպես հոմանիշներ ,որը հիմնավորում է այսպես վերջին տարիներին նախադպրոցական հիմնարկներում օգտագործվում է նախադպրոցական կրթություն հասկացությունը,որը ներառում է երեխայի և՛ դաստիարակության, և՛ կրթության հարցերը:Միևնույն ժամանակ անընդհատ էկոլոգիական կրթության համակարգում որպես ամբողջական հասկացություն՝օգտագործվում է էկոլոգիական դաստիարակությունը,որը էկոլոգիական դաստիարակության ,ուսուցման,զարգացման հանրագումարն է:Արդյունքում էկոլոգիական դաստիարակության համակարգում էկոլոգիական եզրույթների օգտագործման մեջ նկատելի է որոշ իմաստային հասկացություն: ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում ,նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների ձևավորման սկզբունքները բաժնի 5-րդ կետում նշվում է ՝ուսումնադաստիարակչական ծրագրերում խոսքի զարգացման, մայրենի լեզվով հաղորդակցվելու,տրամաբանական մտածողության զարգացման,ինքնուրույն գործունեության տարբեր ձևերի տիրապետման,բարոյագեղագիտական,հայրենասիրական,աշխատանքային դաստիարակության ապահովման մասին:Էկոլոգիական դաստիարակության գործընթացի հաջող կազմակերպման համար առաջին հերթին անհրաժեշտ է հստակեցնել նրա նպատակն ու խնդիրները;Եվ քանի որ նախադպրոցականների էկոլոգիական դաստիարակությունն անձի անընդհատ էկոլոգիական դաստիարակության առաջին աստիճանն է,ապա նրա նպատակն ու խնդիրները որոշվում են ընդհանուր էկոլոգիական դաստիարակության հայեցակարգի հիման վրա:Էկոլոգիական դաստիարակության հայեցակարգի համաձայն ՝Էկոլոգիական դաստիարակությունը ուսուցման, դաստիարակության ,մտածողական ,հուզազգացմունքային ամբողջական գործընթացն է: Այդ որակները ձևավորվում են բնաճանաչողական և բնապահպանական տեսական և գործնական գիտելիքների ,կարողությունների, արժեքային կողմնորոշումների, շրջակա միջավայրում վարքի և գործունեության հասարակականորեն և բնապահպանության օրենքով սահմանված նորմերի յուրացման միջոցով: Էկոլոգիական դաստիարակության նպատակը էկոլոգիական մշակույթի ձևավորումն է, որը դրսևորվում է շրջակա միջավայրի և նրա ամբողջության պահպանման նկատմամբ երեխաների պատասխանատու վերաբերմունքի մեջ,որի հիմքում ընկած են հասարակության մեջ ընդունված բարոյական և իրավական նորմերը:

Էկոլոգիական դաստիարակության հասկացության էությունը բնութագրվում է որպես աճող սերնդի ուսուցման,դաստիարակության,զարգացման անընդհատ գործընթաց՝ ուղղված ընդհանուր էկոլոգիական մշակույթի և էկոլոգիական պատասխանատվության ձևավորմանը՝ իրեն հարազատ մարդկանց,իր երկրի և մոլորակի ճակատագրի նկատմամբ: Էկոլոգիական դաստիարակության միջոցով պետք է անհատի աշխարհաճանաչողությունը զարգացնել և հասցնել այնպիսի մակարդակի,որի շնորհիվ նա ընդունակ կլինի իր խմբի համար կենսական անհրաժեշտություն ունեցող հարցերի լուծման առումով պատասխանատվություն կրելու: Այս տեսակետներից ելնելով՝ մանկավարժները առանձնացնում են

էկոլոգիական դաստիարակության հետևյալ խնդիրները,որոնցից նախադպրոցական տարիքի համար կարևորում են հետևյալները՝

1. Շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում:
2. Քաղաքացու դաստիարակում:
3. Հասարակության մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատում:

Նախադպրոցականների էկոլոգիական դաստիարակության նպատակի և խնդիրների շուրջ տարբեր հեղինակներ առաջարկում են տարբեր բանաձևեր՝

- էկոլոգիական մշակույթի ձևավորում,երեխայի վարքում բնության հետ գիտակցված հարաբերությունների որոշակի մակարդակի ձևավորում,
- Բնության, մարդկանց,իր կլանքում իր դերի նկատմամբ գիտակցված վերաբերմունքի մշակում,
- Բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորո
- Երեխայի մեջ բնության պահպանման,բարելավման,զարգացման անհրաժեշտության գիտակցման դաստիարակում,
- Կենդանի և անկենդան բնության տարբերությունների վերաբերյալ տարրական գիտելիքների ձևավորում,
- Վայրի բնության հետ մարդու խելամիտ փոխհարաբերության,և մարդու ստեղծարար աշխատանքի և մտավոր ստեղծագործության կարողությունների ձևավորում.
- Արժեքային դիրքորոշման ձևավորում.
- Երեխայի մեջ իր գոյության կենսամիջավայրի նկատմամբ վստահության զարգացում;

Սրանք հիմք են հանդիսանում երեխաների՝մարդու իրավունքների և պարտականությունների հետևողական ուսուցման համար: Տարբեր հեղինակների կողմից առանձնացված էկոլոգիական դաստիարակության նպատակների համեմատումը և ընդհանրացումը հնարավորություն են տալիս ենթադրելու,որ առաջարկվածբանաձևերում ավելի հաճախ են հիշատակվում էկոլոգիական մշակույթ, էկոլոգիական գիտակցություն,էկոլոգիական վարք, սեր և խնամք բնության նկատմամբ հասկացությունները:էկոլոգիական դաստիարակության մանկավարժական խնդիրները վերաբերում են՝ ուսուցմանը, դաստիարակությանը, զարգացմանը: Նախադպրոցականների էկոլոգիական դաստիարակության խնդիրների թվում սովորաբար ընդգրկվում է բույսերի և կենդանիների խնամքի կարողության ձևավորումը:

էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրները ներկայացվում են երեխայի անձի զարգացման, ուսուցման և դաստիարակության մեջ, որտեղ վարքի և գործունեության պահանջմունքների ձևավորումն ուղղված է շրջակա միջավայրի բարելավմանն ու առողջ կենսակերպին: Նախադպրոցականների էկոլոգիական կրթության և

դաստիարակության խնդիրները կազմելիս ելակետային հիմք են ընդունվում տարբեր հեղինակների դրույթները և հայ ուսուցիչների ուսուցչապետ Ղ.Աղայանի հետևյալ միտքը Բնությունը համաչափություն և կանոնադրության է սիրում, ոչ մի բան մարդկային հնարմանց մեջ այդ հրաշալի հերդաշնակությանը այնքան համանմանելու պահանջ չունի, ինչքան մարդուս կրթության արվեստը Այսպիսով նախադպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրների թվին պետք է դասել՝ բնաճանաչողական ընդունակությունների,իմացական հետաքրքրությունների ձևավորումը,բնության երևույթների,բուսական ու կենդանական աշխարհի փոխկապակցվածության վերաբերյալ պատկերացումների,հասկացությունների և գաղափարների ձևավորումը, բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման դրդապատճառների սովորույթների ու հմտությունների ձևավորումը, կենդանի բնության նկատմամբ ապրումակցման զգացման ձևավորումը, միմյանց նկատմամբ հանդուրժողականության,հարգանքի ունակության ձևավորումը: Նախադպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակության ընտրության սկզբունքների և առանձնահատկությունները; Նախադպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակությունը առաջին հերթին պետք է դիտարկել անընդմեջ էկոլոգիական կրթության համակարգի շրջանակներում: Այդ նպատակով էլ կրթական այլ աստիճանների համար նախատեսված բովանդակության ընտրության սկզբունքները անհրաժեշտ է կոնկրետացնել,հարմարացնել և մշակել կրթության նախադպրոցական օղակի համար ՝նկատի ունենալով այն հանգամանքը,որ նախադպրոցական տարիքում գիտելիքները շատ քիչ դեր են խաղում,քան նրան հաջորդող կրթական աստիճաններում, և դրանք, երեխաների համար պետք է լինեն հասանելի և գրավիչ: Ընդհանուր մանկավարժական և յուրահատուկ ;Այսպես ,օրինակ, ռուս մանկավարժ Ռ.Կ. Զերնովան հիմնավորում է էկոլոգիական կրթության հետևյալ հիմնական սկզբունքները՝ ամբողջականությունը,անհատականությունը,երկրագիտությունը,գենականությունը: Բացի համընդհանուր դիդակտիկական սկզբունքներից՝էկոլոգիական կրթությանը վերաբերում են նաև միասնականացման, անընդհատության,բնության գործառույթների ուսուցանող սկզբունքները: Նախադպրոցական մանկավարժության մեջ գիտականության սկզբունքը առաջին անգամ ձևակերպել է Ա,Պ.Ռուսովան:Նա նշում է , որ նախադպրոցական երեխաներն իրենց տարիքային հնարավորությունների սահմաներում գիտական,ճշգրիտ տվյալներ ստանան շրջակա միջավայրի մասին;Այսինքն՝ էկոլոգիական կրթության տեսակետից գիտականության սկզբունքն ենթադրում է նախադպրոցականների ծանոթությունը տարրական էկոլոգիական գիտելիքների,որոնք երեխայի գործողությունների դրդապատճառների, աշխարհայացքի, էկոլոգիական գիտակցության ձևավորման ,իմացական հետաքրքրությունների զարգացման հիմք կծառայեն:Իհարկե , չի կարելի երեխաներին տալ այնպիսի գիտելիքներ ,որոնք հասու չեն նրանց մտավոր զարգացման կարողություններին, սակայն անհրաժեշտ է հետագայում դպրոցում տրվելիք հասկացությունների ձևավորման և գիտելիքների յուրացման համար նախադրյալներ ստեղծել: Նախադպրոցական տարիքի երեխաներին բնության օրենքների ուսուցանումը պետք է կազմակերպել կոնկրետ օրինակների վրա; Դա նշանակում է,որ նախադպրոցականի մեջ կարող է և պետք է ձևավորվի էկոլոգիական տարրական գիտելիքների համակարգ,միայն թե դրանց բովանդակությունը պետք է բացատրվի նախադպրոցական յուրահատուկ գործունեության ձևերով՝ խաղով, աշխատանքով, էքսկուրսիաներով և գործնական այլ պարապմունքներով: Այսինքն՝ արդեն նախադպրոցական տարիքում

երեխան պետք է ստանա գիտականորեն հավատի տեղեկատվություն,որը,սակայն,գործնականում խախտվում է կամ չի իրականացվում դաստիարակների անբավարար էկոլոգիական պատրաստվածության պատճառով: Գիտականության սկզբունքի հետ սերտորեն կապված է նախադպրոցականի համար նախատեսված նյութի մատչելիության սկզբունքը: Այն ենթադրում է երեխային տրվող գիտելիքների հուզական զգացմունքային երանգավորում: Մարդասիրական սկզբունքը ենթադրում է երեխայի դաստիարակությունը բնօգտագործման ուղղությամբ,նոր արժեքներով առողջ կենսաձև վարելու,քանի որ էկոլոգիական կրթության նպատակը մարդու առողջության պահպանումն է էկոլոգիապես անվտանգ միջավայրում: Այս սկզբունքն ունի էկոլոգիական բովանդակություն,որը պետք է համարվի նախադպրոցական հաստատությունների գործունեության ելակետը;Այն պետք է իրացվի բնօգտագործման մշակույթի դաստիարակման միջոցով էկոլոգիական կրթության բովանդակությունը նպաստում է երեխայի մեջ մարդու՝ որպես բնության մի մասնիկի պատկերացման և երկրի վրա կյանքի ձևերի նկատմամբ հարգալից և հոգատար վերաբերմունքի ձևավորմանը: Մարդասիրական ուղղվածությամբ կրթության բովանդակությունը նպաստում է երեխայի կողմից բնության գեղագիտական ընկալմանը, արտաքին աշխարհի հետ ներդաշնակ ապրելու ցանկությանը:Կանխատեսելիության սկզբունքը ենթադրում է, որ նախադպրոցական հաստատություններում իրականացվող էկոլոգիական կրթության արդյունքում երեխաների մեջ ձևավորվում են տարրական պատկերացումներ բնության մեջ գոյություն ունեցող կապերի մասին,և այդ պատկերացումների հիման վրա զարգանում են նրանց կողմից իրենց գործողությունների կանխատեսման կարողությունները: Երեխան պետք է հասկանա, որ ինքը բնության մի մասնիկն է:Նախադպրոցական տարիքից բնության հանդեպ վերաբերմունքը և էկոլոգիական հիմնարար պատկերացումները ձևավորելը խիստ անհրաժեշտ է, քանզի ամեն բան սկսվում է այս տարիքից: Ահա թե ինչու նախադպրոցական տարիքի երեխայի մեջ կարևոր դեր է գրավում բնագիտական և էկոլոգիական դաստիարակությունը մանկապարտեզում էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը էկոկենտրոն հայեցակարգի տեսանկյունից կառուցվում է կենդանի բնության մեջ, թանգարաններ, կենդաբանական, բուսաբանական այգիներ այցելելու հիման վրա,քանի որ էկոլոգիական դաստիարակության առաջին հերթին ենթադրվում է՝

իրեն զգալ բնության մի մասնիկը,

ձևավորել երեխաների մեջ հուզական հոգատար վերաբերմունք բնության օբյեկտների նկատմամբ,

Ձևավորել գեղեցիկը տեսնելու ընդունակություն.

Ձևավորել և զարգացնելերեխաների ճանաչողական ընդունակությունները և բնապահպանական տարրական կարողությունները:

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի կազմակերպման համար կարևոր է էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը,որը դրսևորվում է շրջակա միջավայրի և նրա ամբողջական պահպանման նկատմամբ երեխաների պատասխանատու վերաբերմունքի մեջ,որի հիմքում ընկած է հասարակության մեջ

ընդունված բարոյական և իրավական նորմերը;Մանկապարտեզում երեխաների էկոլոգիական կրթության ու դաստիարակության խնդիրներն են շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում,բնության նկատմամբ գաղափարական վերաբերմունքի դաստիարակում, հասարակության մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատում: Այս խնդիրների իրականացումը նպաստում է տվյալ տարիքի երեխաների աշխարհայացքի ձևավորման հիմքերը դնելու կարևոր գործընթացին:Էկոլոգիական դաստիարակության խնդիրների թվին պետք է դասել՝ բնահանաչողական ընդունակությունների իմացական հետաքրքրությունների ձևավորումը բնության երևույթների, բուսական և կենդանական աշխարհի փոխկապակցության վերաբերյալ պատկերացումների ,հասկացությունների և գիտելիքների ձևավորումը բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման դրդապատճառների.սովորույթների ու հմտությունների ձևավորումը, կենդանի բնության նկատմամբ ապրումակցման զգացմունքի ձևավորումը:Նախադպրոցականները պետք է ձեռք բերեն կենսաէկոլոգիական տարրական գիտելիքներ, այդ թվում՝կենդանի և անկենդան բնության մասին:Կենդանի մարմինների առանձնահատկությունները,նրանց բազմաձևությունը,տարածումը և նրանց հարմարվածությունը այդ միջավայրին: Բնակության միջավայրի բազմաձևությունը ՝ջրային, օդային, հողային, կենդանիների և և բույսերի բնակության վայրը, նրանց բազմաձևությունը:

Նախադպրոցականները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում նաև անկենդան բնության և նրա կենդանի բնության հետ ունեցած կապերի հանդեպ:Էկոլոգիական կրթության բովանդակության մեջ սոցիալական էկոլոգիայի հարցերի ներառումը կնպաստի երեխայի շրջակա միջավայրում իր տեղի գիտակցմանը ,նրա էկոլոգիապես գրագետ վարքագծի ունակությունների մշակմանը:Այդ նպատակով կարելի է կազմակերպել զրույցներ հետևյալ հարցերի ձևով.

- Մարդիկ և շրջակա միջավայրը.
- Ինչպես եմ օգտագործում բնության բարիքները.
- Իմ առողջությունը և շրջակա միջավայրը.
- Ինչ կլինի ինձ հետ,եթե ոչնչացվեն շրջապատի կենդանիներն ու բույսերը.

Երեխան պետք է ծանոթանա մարդկանց ոչ գրագետ էկոլոգիական գործողությունների հետևանքներին, պետք է իմանա,թե ինքը ինչպես պետք է պահի իրեն ոչ միայն բնության գրկում,այլև տանը,գյուղում,քաղաքում: Պետք է ավագ նախադպրոցականը ծանոթանա էկոլոգիական անվտանգության հարցերին : Նա պետք է ճանապարհի մոտ խաղալիս կարող է ոչ միայն ավտոմեքենայի կողմից վրաերթի ենթարկվել,այլև ավտոմեքենայի արձակած գազերը շնչելը կամ աղբանոցի մոտ զբոսնելը նույնպես վտանգավոր ր վնասակար է առողջության համար:Շատ կարևոր է արդեն նախադպրոցական տարիքից երեխաների մոտ դաստիարակել խելամիտ բնօգտագործման անհրաժեշտության իմացությունը: Էկոլոգիական կրթության բովանդակությունը սերտորեն կապված է երեխայի

հույզերի զարգացման,զարմանալու,կենդանի էակները տեսնելու կարողության հետ: Դա նշանակում է,որ էկոլոգիական կրթության բովանդակության մեջ ներառվում է իմացական,արժեքային,նորմատիվային գործնական բաղադրամասեր, քանի որ նրանցից յուրաքանչյուրը ուսումնական գործընթացում ունի իր գործառույթը: Էքսկուրսիաների ,դիտումների,շրջապատի հետ շփման մեջ մտնելու շնորհիվ երեխան ձեռք է բերում անձնական փորձ,որը թույլ է տալիս նրան հասկանալ իր տեղը բնության մեջ ,նրանում վարքի նորմերի ճիշտ դրսևորման ոչինչ չքանդելու, չապականեու, չտրորեու, այլ տնկելու,ջրելու,խնամելու անհրաժեշտություն: Էկոլոգիական բնույթի խաղերը և բարոյագիտական զրույցները նպաստում են երեխաների էկոլոգիական գիտակցության ձևավորմանը: Բարոյագիտական զրույցների թեման պետք է լինի երեխայի շրջակա միջավայրը,բնության մեջ իրեն պահելու վարքի կանոնները,բնության օգտակարության, ինչպես նաև նրան հասցված վնասի հետևանքները: Կերպարվեստի, երաժշտության, գրականության, թատրոնի, քանդակագործության միջոցով երեխաները ծանոթանում են բնության երևույթներին, կյանքի գեղեցիկ, վեհ և բացասական կողմերին, երեխաների մեջ սեր, վստահություն, հարգանք է դրսևորվում բնության , հայրենիքի, իրենց շրջապատող մարդկանց նկատմամբ: Կատարելով իր տարիքին ու ուժերին համապատասխան բազմապիսի աշխատանքներ՝ մեծահասակների հետ ծաղիկ տնկել, սերմեր աճեցնել,ջրել,դրանք մշակել,երեխան ձեռք է բերում այնպիսի կարևոր հատկություններ,ինչպիսիք են՝ ջանասիրություն,բնությանը օգնելու պատրաստականություն,սեր դեպի բնությունը և այլն :Այսպիսով էկոլոգիական դաստիարակության զարգացումը դա՝ խմբում երեխայի գործունեության էկոլոգիական ուղղվածությունը,գբոսանքների ժամանակ դիտումների անցկացում,խմբի բնության օրագրում դիտումների գրանցում, գրականության ընթերցում և ունկնդրում, խաղերի կազմակերպում և անցկացում,խմբերում էկոլոգիական դաստիարակության պայմանների ստեղծումէբնության անկրան առկայություն,գրադարան,լուսանկարներ,բնական նյութեր՝ինքնուրույն խաղերի և փորձերի անցկացման համար,համապատասխան բույսերի և կենդանիների, թռչունների ընտրություն և խնամք: Երեխաներն ամենուր , այս կամ այն կերպ շփվում են բնության հետ անտառ և պուրակ,թիթեռներ,թռչուններ,ամպերի շարժում,ընկնող ձյան փաթիլներ,նույնիսկ անձրևից առաջացող ջրափոսերը գրավում են երեխաների ուշադրությունը,ուրախացնում նրանց և տալիս երեխաների զարգացման հարուստ նյութ: Բնության մեջ կազմակերպված խաղերը,ծաղիկների և հատապտուղներ հավաքելը,կենդանիների և բույսերի դիտումները մեծ հաճույք են պատճառում երեխաներին: Առաջ բերում իր հայրենի տեղանքի ՝հայրենիքի նկատմամբ սեր և հպարտություն: Ծաղիկների և հատապտուղների գույնը, ձևը , բույրը, թռչունների դայլայլը, առվակների քչքչոցը, տերևների սոսափյունը հնարավորություն են տալիս երեխաներին զգալ բնությունը,որը մեծապես նպաստում է նրանց գեղագիտական ընկալումների զարգացմանը: Մանկական տարիքում բնությունը ինչպես կա, տեսնելու և զգալու կարողությունը, առաջանում է խորը հետաքրքրություն բնության նկատմամբ և հարստացնում նրանց գիտելիքները: Նախադպրոցականի ծանոթացումը բնության հետ,հանդիսանում է շրջապատող բնության մասին կայուն և զգայական գիտելիքների յուրացման ,շրջապատի նկատմամբ ճիշտ վերաբերմունքի դաստիարակման լավագույն միջոց: Զունենալով բնության երևույթների մասին գիտելիքներ, երեխաները հաճախ դառնում են անտարբեր և անզգա՝ սպանում են գորտերին, ոչնչացնում միջատներին ,բույսերին,մինչդեռ սխալ դաստիարակությունն ուղղելն ավելի դժվար է , քան նորը ձևավորելը: Որպեսզի երեխաները ճիշտ ընկալեն բնության երևույթների

ընկալումները ,առանց որի չի կարող իրականացվել նախադպրոցականի բազմակողմանի զարգացումը: Էքսկուրսիոնների, նկարների դիտման և այլնի շնորհիվ երեխան իմանում է , որ կենդանական աշխարհը որոշակի տարածքում կամ ջրատարածությունում ապրող կենդանիների տեսակների ամբողջությունն է: Կենդանական աշխարհը անփոխարինելի նշանակություն ունի նաև հողառաջացման գործընթացում: Հողում ապրող անհամար մանր, կլոր որդերը,հողային տիզերը,անձրևաորդերը և այլ կենդանիներ փխրեցնում են հողը, նպաստում են նրա օդաթափանցելիությանը, ջրաթափանցելիությանը, հարստացնում են օրգանական նյութերով,բարձրացնում բերրիությունը: Կենդանական աշխարհը էական նշանակություն ունի բույսերի կյանքում: Ոմանք բույսերի փոշոտման գործընթացի ակտիվ մասնակից են ,մյուսները տարածում են նրանց սերմերը: Մի շարք կենդանիների բացասական դեր են խաղում բույսերի հիվանդությունների և վնասատուների տարածման տեսակետից; Կենդանական աշխարհի ներկայացուցիչները նաև էական ազդեցություն են ունենում գեղագիտական ,հանաչողական դաստիարակչական ուղղություններով: Կենդանական աշխարհը դիտվում է անընդհատ աճի և զարգացման մեջ;երեխաները պետք ՝ գիտակցեն ,որ մենք ապրում ենք շնչելով թթվածին,որը մեզ համար ապահովում են կանաչ բույսերը:Նրանք շրջակա միջավայրից կլանում են ածխաթթու գազը և օդ արտանետում թթվածին:Նրանց պետք է բացատրեն , որ հող մշակելով ենք ստանում սնունդ,խոտով են կերակրում անասուններին ,որոնցից հետո ստանում ենք կաթ,կաթնամթերք ու մսամթերք, տարբեր բույսերից օգտակար թուրմեր ու դեղեր են պատրաստում , օգտագործում են թուղթը,որը ստանում են փայտից; Բնության բարիքներն ինչպես երկրի վրա են,այնպես էլ ընդերքում: Բազմաթիվ հանքավայրեր շահագործելիս են մարդիկ ստանում օգտակար հանածոներ ու կյանքի գրեթե բոլոր բնագավառներում անհրաժեշտ վառելիք: Բնությունը մարդկանց տվել է ապրելու ու գործելու անսահման հնարավորություններ,բայց մարդիկ մոռանում են , որ պետք է պահպանել բնությունը, որպեսզի այն հետագայում էլ կարողանա ծառայել մարդկանց ; Ցավոք , մեր օրերում անխնա շահագործում են հանքերը , աղտոտվում է բնությունը ՝կանաչ տարածքներն ու ջրերը,ինչն էլ խիստ բացասական ազդեցություն է գործում ջրում և ցամաքում ապրող կենդանիների վրա:Անխնա հատվում են ծառերը ; Բնությունը պետք է պահպանել,որպես կենսական էներգիայի անփոխարինելի աղբյուր; Երեխաները պետք է տեղյակ լինեն այնպիսի ընդհանուր բնական երևույթների մասին, ինչպիսիք են արևը,անձրևը,ամպրոպը, քամին, տերևաթափը և աղանակային այլ երևույթներ, որոնք մենք ամեն օր հանդիպում ենք փողոցում : Նկարներով և բանաստեղծություններով երեխաների համար ավելի լավ է ցուցադրել ,բացատրել ,թե տարվա որ ժամին է տեղի ունենում այս կամ այն այլ երևույթ և ինչպիսին է բնությունը,օրինակ ,ամռանը անձրևից հետո , երբ ծիածանը հայտնվում է կամ ձմռանը ,երբ ծառերը ձյուն են հագնում: Երեխաները հստակ պետքէ է կարողանան տարբերակել յուրաքանչյուր եղանակ ,իրեն բնորոշ հականիշներով: Պետք է կարողանան անվանել ամեն եղանակին հատուկ մրգերն ու բանջարեղենները; Այդ ամենին երեխաները ծանոթանում են առօրյա զբոսանքների ,պարապմունքների և

զրույցների ընթացքում:Շատ տպավորվում են , երբ իրենք են իրենց ձեռքով տնկում որևէ բանջարեղեն , երբ իրենց ձեռքով խնամում են ծաղիկները կամ ջրում ծառերը հետագայում մրգեր հավաքելու նպատակով : Կարևոր է ,որ երեխաները իրենց իսկ զգայարաններով տեսնեն,լսեն,զգան բնության մեջ փոփոխվող ամեն բան ՝ամռանը շոգ է ,ձմռանը ցուրտ:Գարնանը ծառերը ծաղկում են ,իսկ աշնանը այդ ծաղկած ծառերը վերածվում են մրգաշատ ու պտուղներով լի ծառեր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Խաղը որպես էկոլոգիական դաստիարակության միջոց՝էկոլոգիական դաստիարակության գործընթացը կազմակերպվում է դաստիարակի կողմից և իրականացվում ՝ մի շարք միջոցներով:Հիմնական միջոցը բնությունն է , բնության հետ շարունակական շփումը :Առավել արդյունավետ է դառնում , երբ երխաների համար կազմակերպվում են խաղեր բնության գրկում: Նախ մի փոքր խոսենք այն մասին , թե ինչ խնդիրներ ունի էկոլոգիական դաստիարակությունը; Մանկապարտեզում երեխաների էկոլոգիական կրթության ու դաստիարակության խնդիրներն են՝շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում,բնության նկատմամբ քաղաքացիական վերաբերմունքի դաստիարակում ,հասարակության մեջ ընդունելի մարկային ջոխհարաբերությունների հաստատում :Խաղային գործունեությունը նպաստում է գործունեության նոր ձևերի ՝աշխատանքի և ուսումնական գործունեության , առանձնացմանը: Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային և ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝նպատակ , պլանավորում, արդյունք որոնք ,ձևավորելով խաղային գործունեության ընթացքում , տեղափոխվումեն գործունեության այլ ձևեր: Հատուկ կազմակերպված պարապմունքներից բացի էկոլոգիական գիտելիքներ կարող են փոխանցվել խաղ–պարապմունքների ,խաղ–վիկտորինաների,պարապմունք–բանավեճերի և ուսուցման այլ ձևերի միջոցով: Արդյունավետ է նշված հիմնական միտքոցների համատեղ կիրառումը բնության գրկում: Պարապմունքների համակարգում իր ուրույն տեղն է գրավում համալիր պարապմունքը,որը չափազանց արդյունավետ է նաև նախադպրոցականի էկոլոգիական դաստիարակության ընթացքում; Բնության բաղադրիչների միջև ամենուր գոյություն ունեն փոխադարձ սերտ կապեր; Միմյանց հետ կապված են անկենդան և կենդանի բնությունը,բույսերն ու կենդանիները;մարդը լինելով բնության մի մասնիկը ,նույնպես հազարավոր թելերով կապված է իր շրջապատի բնության՝հողի գետերի,օդի,կենդանի օրգանիզմների հետ:

Այսպիսով գործնական մասը ընթացել է հետևյալ փուլերով.

1. Ջրի ագրեգային վիճակների մասին պարապմունք,փորձեր:

2. Կենդանիների մասին զրույց պարապմունք:

3. Անտառային ձայներ խաղ;

Առնցացրել եմ պարապմունք օգտվելով էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում մեթոդական ձեռնարկից՝Ջուրը և նրա նշանակությունը:

Նպատակները՝ձևավորել մարդու և բնության փոխկապակցվածության վերաբերյալ գիտելիքներ,դրանք զարգացնել ՝երեխաներին տեղեկություններ հաղորդելով ջրի նշանակության ,հատկությունների մասին:Ծանոթացնել ջրի վիճակներին հեղուկ,պինդ,գազային,ինչպես նաև ջրի տեսակներին ՝փափուկ,կոշտ,աղի:
Սովորեցնել խնայողաբար վերաբերվել ջրին:Կատարելագործել տրված հարցերին լեզվական ճիշտ կառույցներով և ամբողջական նախադասություններով պատասխանելու երեխաների կարողությունը:հարստացնել բառապաշարը և հղկել խոսքը:Ջրի ագրեգատային վիճակների մասի խոսել եմ պարապմունքի ժամանակ:

Նախապես երեխաների համար միացրել եմ տեսանյութեր,որոնց միջոցով ստացել են գիտելիքներ; Այնուհետև իրենք իրենց ձեռքով լցրեցին ջուրը խորանարդիկների մեջ և ես բացատրեցի ,որ այն տեղավորելով սառցե խցիկ այն կվերածվի սառույցի:հաջորդ փորձը նույնպես կատարել եմ երեխաների հետ : Թեյնիկի մեջ ջուր լցրեցինք և այն սկսեց եռալ:Երեխաները հստակ տեսան , թե տաքանալով ինչպես է ջուրը փաղչում:Այս ամենը նրանց շատ դուր եկավ : Նրանք զարմացան տեսնելով,որ հեղուկ ջուրը ինչպես դառնավ սառույց: Փոքրիկ տարայի մեջ լցրեցինք ջուր,այնուհետև ավելացրինք շաքարավազ և խառնեցինք :Համեմատեցինք ու նշեցինք ,թե ինչպիսին է ջուրը , անհամ, թե քաղցր: Այս փորձերն ու պարապմունքները երեխաներին անչափ դուր եկան ու արդյունքում նրանք ստացան գիտելիքներ :
Անտառային ձայներ խաղի ժամանակ ,նրանք լսեցին կենդանիների ձայնագրած ձայներ,սովորեցինք խաղի ժամանակ կենդանիների ձայներ արձակել,երեխաները այդ ժամանակ սկսում են ոգևորվել և միմյանց հերթ չէին տալիս;Կարծում եմ ,որ այս գործնական աշխատանքը արդյունավեր էր երեխաների գիտելիքների զարգացման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս ամենից ես եզրակացրեցի ,որ էկոլոգիա հասկացության հիմքում ընկած է բնությունը,նրա հավասարակշռության պահպանությունն,որը շատ վաղուց է սկսվում ,իսկ նոր ժամանակներում այն դարձել է կենտրոնական հարց, համամարդկային հիմնախնդիր:Էկոլոգիական դաստիարակության

կարևորագույն մանկավարժական պայմաններն են՝էկոլոգիական զարգացնող միջավայրի կազմակերպումը ,էկոլոգիական աշխատանքի պլանավորումը ,էկոլոգիական դաստիարակության տեխնոլոգիաների առկայությունը;Այսպիսով ,էկոլոգիական դաստիարակության արդյունքում երեխան սովորում է սիրել բնությունը և խնամքով վերաբերվել նրան,հասկանում է բնության բոլոր օղակների փոխպայմանավորվածությունը և գիտակցում բնապահպանական գործունեության անհրաժեշտությունը:Երեխաներին էկոլոգիայի մասին հարկավոր է հաղորդել իրենց համար մատչելի լեզվով գիտելիքներ;Անհրաժեշտ է ամեն բան ցուցադրել փորձով,զարգացնել երեխաների մեջ ուսումնասիրելու կարողությունը:Սեր սերմանել դեպի բնության ամեն տեսակի երևույթ և սովորեցնել այդ երևույթները բացահայտելու ուղին;Հաղորդել գիտելիքներ այն մասին,թե ինչ է իրեն շրջապատում և որն է դրանից բնության մի մասնիկը,սովորեցնել տարբերակել կենդանի ու անկենդան բնությունը:Երեխայի գիտակցությունը հասցնել այն,որ մեր մոլորակը կարող է գոյատևել միայն այն դեպքում,եթե մենք հոգ տանենք բնության մասին ;Ես հասկացա,որ երեխայի աշխարհաճանաչումը կարելի է ասել,որ սկսվում է բնաճանաչողությունից;Երեխային կրթելով էկոլոգիական գիտելիքներով՝դաստիարակում ես նաև լինել աշխատասեր,զգույշ և ուշադիր:Սովորեցնում ես սիրել,արթնացնում ես գեղեցիկը տեսնելու ու զգալուկարողությունը:Բնությունը դառնում է հզոր գործիք նոր ձևավորող մարդուկին ծանոթացնելու կյանքի հետ;Անգամ հեքիաթ պատմելիս ,երբ որոշակի կենդանիներ նմանեցվում են մարդկանց՝դա նույնպես երեխայի համար դաստիարակության միջոց է դառնում՝չլինել խոզի պես ագահ ու փնթի,լինել շան նման հավատարիմ:Երեխայի մեջ կենդանիների ամեն տեսակին բնորոշ բացասական ու դրական կողմով սերմանվում է սեր դեպի լավը և զզվանք դեպի վատը:

Այսպիսով էկոլոգիական զարգացման պայման է ,էկոլոգիական ու բնագիտական պատկերացումների ձևավորումը մանկապարտեզում անչափ կարևոր ու անհրաժեշտ է ապագա լավ մարդ մեծացնելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում; Գ. Մարտիրոսյան

2. ՈՒսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար։Հ. Միտոյան,Լ. Սարգսյան

3. Մանկապարտեզի կրթական համալիր ծրագիր տարիքային կրտսեր,միջին,ավագ տարիքային խմբերի համար։